

ՄԱԿԲԱՅ // ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ
ՀԱՄԱՏԵՂՈՂ ԲԱՌԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.70

Ամփոփում

Գրաբարում կան բառեր, որոնց ձևաբանական արժեքը երկփեղկված է տարբեր խոսքի մասերի միջև. դրանք հանդես են գալիս մեկից ավելի խոսքիմասային արժեքների համատեղումներով: Այդ բառերը կոչվում են խոսքիմասային տարարժեք բառեր, իսկ քերականական երևույթը՝ խոսքիմասային տարարժեքություն (6) (7):

Խոսքիմասային տարարժեք բառերը, լինելով տարժամանակյա իրողություններ, լեզվի համաժամանակյա կտրվածքում հավասարապես կարող են հանդես գալ մեկից ավելի ձևաբանական արժեքների համատեղումներով ու համապատասխան շարահյուսական գործառույթներով:

Սույն հոդվածում մենք քննել ենք մակբայ/նախադրություն ձևաբանական արժեքներ համատեղող բառերը գրաբարում, որոնք, խոսքիմասային փոխանցումներով պայմանավորված, ձեռք են բերել մեկից ավելի խոսքիմասային իմաստ: Այդ կարգի բառերի ձևաբանական արժեքները իրացվում են շարահյուսական կիրառության մեջ:

Բանալի բառեր և արտահայտություններ. մակբայ, նախադրություն, ձևաբանական արժեք, խոսքիմասային փոխանցում, նյութական իմաստ, սպասարկու իմաստ, տարարժեքություն, շարահյուսական մակարդակ:

Ներածություն

Լեզվի բառային կազմը բաղկացած է ամենատարբեր բառերից՝ նյութական իմաստ ունեցող բառեր, բառային իմաստից զուրկ բառեր և այլն:

Լեզուն արտահայտում է ոչ միայն արտաքին աշխարհի առարկաները և նրանց հատկանիշների անվանումները, այլև նրանց տարբեր հարաբերություններ ու խոսողի վերաբերմունքը, այդ պատճառով էլ խոսքի մասերը ըստ բնույթի բաժանվում են երեք խմբի.

- ա) նյութական իմաստ ունեցող՝ գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ, մակբայ,
- բ) քերականական իմաստ ունեցող՝ կապ և շաղկապ,
- գ) վերաբերմունքային իմաստ ունեցող՝ եղանակավորող բառեր, ձայնարկություններ (2):

Լեզվի բառերն ունեն բառային և քերականական իմաստներ, որոնք կապված են միմյանց հետ, այդ պատճառով էլ բառիմաստային փոփոխությունները հաճախ կարող են հանգեցնել նաև քերականական իմաստների փոփոխության:

Բառերի բառային և քերականական իմաստների փոփոխությունները ընթանում են

1. նյութական իմաստ ունեցող բառերի ներսում և նրանց միջև,
2. սպասարկու բառերի ներսում և նրանց միջև,
3. նյութական իմաստ ունեցող բառերի և սպասարկու բառերի միջև (6):
Կամ՝ տարբեր եղանակներով են տեղի ունենում փոփոխությունները, ինչպես՝

ա) նույն խոսքի մասերին պատկանող բառերի միջոցով,

բ) այլ խոսքի մասերի պատկանող բառերի միջոցով,

գ) նույն և այլ խոսքի մասերի պատկանող բառերի միացման միջոցով (2):

Խոսքիմասային փոխանցումների ընթացքում բառերը կարող են համատեղել նախկին և նոր խոսքիմասային արժեքի հատկանիշները (8):

Նյութական խոսքի մասերի սահմաններում բառերը փոփոխության են ենթարկվում բառակազմական միջոցներով (բառաբարդում, ածանցում):

Նյութական և սպասարկու նշանակություն ունեցող խոսքի մասերի բառերը փոփոխությունների են ենթարկվում՝

ա) բառակազմական եղանակներով, երբ մի խոսքի մասերի պատկանող բառը բառակազմական որևէ միջոցով՝ ածանցումով կամ բառաբարդումով, մտնում է մի այլ խոսքի մասի մեջ, օրինակ՝ քաջ+ապեւ=քաջապեւ, մեծ+հոչակ=մեծահոչակ,

բ) փոխանցման միջոցով, երբ բառը կամ բառաձևը, առանց բառակազմական միջոցի և ձևային փոփոխության, փոխում է իր խոսքիմասային արժեքը և հատում այլ խոսքի մասի սահմանը: Օրինակ՝ գրաբարում՝ **բայց** շաղկապից առաջացել է **բայց** նախադրությունը, **բնաւ** մակբայից՝ **բնաւ** եղանակավորող բառը:

Բառիմաստային փոփոխությունները, ազդելով բառերի խոսքիմասային արժեքների վրա, կարող են նրանց զրկել նյութական բովանդակությունից՝ վերածելով սպասարկու բառերի: Այս դեպքում փոփոխության է ենթարկվում թե՛ բառերի իմաստը, թե՛ խոսքիմասային պատկանելությունը:

Այս իրողությունը լեզվի պատմական զարգացման երկարատև ժամանակահատվածում հատուկ է նրա բոլոր գոյավիճակներին:

Մեթոդաբանությունը

Բառերի իմաստաարժեքային փոփոխությունների գործընթացը լեզվական համակարգի շարժունության հետևանք է, որ լայն առումով

ընդգրկում է լեզվի զարգացման տարժամանակյա, նեղ առումով՝ համաժամանակյա կտրվածքները: Այլ կերպ ասած՝ բառիմաստի և խոսքիմասային արժեքների հարաբերակցված փոփոխությունները լեզվի զարգացման միևնույն փուլի շրջանակում թե նրանից դուրս միշտ կրում են տարժամանակյա բնույթ:

Այդ առումով որպես հետազոտության մեթոդ ընտրվել են պատմահամեմատական մեթոդի համաժամանակյա և տարժամանակյա եղանակները:

Քննարկում

Հինհայերենյան շրջանում հանդիպում են նյութական բովանդակություն ունեցող որոշ բառեր, որոնց իմաստը մթազնել է, վերացարկվել է նրանց առարկայական նշանակությունը, և այդ բառերը, հեռանալով իրենց նյութական բովանդակությունից, վերածվել են սպասարկու բառեր՝ նախադրությունների, շաղկապների, ձայնարկությունների, եղանակավորող բառերի:

Բառերի բառային իմաստի փոփոխությունները կատարվում են

1. բառի արմատի նյութական իմաստի վերացարկման և վերաիմաստավորման հետևանքով,
2. խոսքիմասային հարացույցի թեք ձևերում բառաձևի քերականական իմաստի մթազնման հետևանքով (6):

Ռ. Իշխանյանը նշում է, որ լեզվում նոր խոսքի մասերի առաջացումը կապված է մտածողության զարգացման հետ, այսինքն՝ «որևէ բառ մտածության նոր կատեգորիա արտահայտելու համար սկսում է խոսքի մեջ ավելի ու ավելի շատ հանդես գալ իր խոսքի մասի համար խորթ իմաստ արտահայտող շարահյուսական ֆունկցիաներում: Փաստորեն տեղի է ունենում խոսքի մասի եպիզոդիկ փոխանցում» (5):

Սկսած 5-րդ դարից հայ քերականագիտության մեջ տարբեր մեկնաբանություններ են արձանագրվել նյութական խոսքի մասերի և սպասարկու բառերի խոսքիմասային փոխանցման երևույթի վերաբերյալ:

Գրաբարի քերականներից Ա. Այտընյանը չթեքվող խոսքի մասերի քննությանն անդրադառնալիս նշում է. «Միևնույն բառը կարող է մակբայ և շաղկապ համարվել, ինչպես *մանաւանդ, ապաքէն*, կամ մակբայ և նախադրություն, ինչպես *իբրև, որպէս և* այլն» (3), և հանգում այն եզրակացության, որ միևնույն չթեքվող խոսքի մասը «հոլով առած նախադրություն է, իսկ բայի վերայ մակբայ է *շուրջ գնովաւ և շուրջ գալ*» (3):

Ա. Բագրատունին, խոսքիմասային անցումների երևույթը չբնորոշելով «փոխանցում» եզրույթով, նշում է մակբայ // շաղկապ ձևաբանական արժեքներ համատեղող բառեր (այլ, ապաքէն, իբր, իբրև, մինչ, մինչդեռ, իսկ, մանաւանդ, անգամ և այլն) (4):

Ստ. Պալասանյանը վկայում է այնպիսի բառեր, որոնք գրաբարում գործածվում են և՛ իբրև մակբայ, և՛ իբրև նախադրություն, ինչպես՝

Բազմութիւն մարդկան կան *արտաքոյ* (մակբայ)

Բազմութիւն մարդկան կան *արտաքոյ* դրանն (նախադրություն) (12):

Վրթ. Չալըխյանը, խոսքի մասերի հարաբերակցության թեմային անդրադառնալիս, խոսում է մակբայի և նախադրության իմաստային գուգորդումների մասին (շուրջ, ի, մեջ, հուպ, առաջի, զկնի, ի վերայ, ի վերոյ, ընդ առաջ և այլն)՝ դրանց համարելով գոյականներ:

Այդ կարգի գոյականները հատկացուցիչ են ունենում, համարվում են նախադրություններ, իսկ բայի վրա դրվելիս՝ մակբայներ, ինչպես՝

Ընդ առաջ էլ նորա – *Առաջի* իմ կայ (նախադրություն):

Ընդ առաջի էլ նմա – *Առաջի* կայ ինձ (մակբայ) (11):

Խոսքիմասային փոխանցման երևույթը հատուկ է հատկապես չթեքվող խոսքի մասերին:

Ի տարբերություն նյութական խոսքի մասերի, որոնց բառային կազմը հարստանում է ինչպես բառակազմական, այնպես էլ փոխանցման եղանակով՝ սպասարկու բառերը հարստանում են միայն՝ այլ խոսքի մասերի հաշվին կատարվող փոխանցման եղանակով, այսինքն՝ նյութական խոսքի մասերից փոխանցում է կատարվում սպասարկու բառերի:

Խոսքիմասային տեղաշարժերի հետանքով նյութական իմաստ ունեցող բառերից գրաբարում առաջանում են ոչ նյութական իմաստ ունեցող բառեր՝ նախադրություններ, շաղկապներ, եղանակավորող բառեր ու ձայնարկություններ:

Նախադրությունն ու շաղկապը քերականական իմաստ արտահայտող խոսքի մասեր են, որոնք չունեն անվանողական գործառույթ և արտահայտում են բառերի ու նախադրությունների հարաբերությունները:

Նախադրություններն ու շաղկապները, իբրև կապակցական բառեր, չունեն բառային նյութական և խոսքիմասային ընդհանուր իմաստներ: Նրանք շարահյուսական սպասարկու գործառություն ունեն և մասնակցում են նյութական նշանակության բառերի զանազան հարաբերություններ, նրանց հոլովական, ինչպես նաև խոսքիմասային իմաստների ձևավորմանը:

Սպասարկու բառերն առաջանում են նյութական նշանակության բառերից՝ քերականացման և նրանց բառային իմաստների աստիճանական վերացման ուղիով:

Այս առիթով Ս. Աբրահամյանը նշում է, որ «լեզվի մեջ գոյություն ունի, այսպես ասած, անհրաժեշտության օրենք, որը լեզվի զարգացման գործում առաջնիչ դեր է կատարում: Դրա լավագույն դրսևորման օրինակ կարող է ծառայել կապերի առաջացումը» (1):

Ըստ հեղինակի՝ առարկաների ու երևույթների միջև գոյություն ունեցող բազմապիսի հարաբերություններ արտահայտելու անհրաժեշտությունն է, որ պատմականորեն երկարատև ժամանակաշրջանում լեզվում հնարավորություն է տվել որոշ բառերի կապային արժեքով հանդես գալ (1):

Գրաբարի նախադրություններն իրենց իմաստով ավելի մոտ են նյութական նշանակություն ունեցող խոսքի մասերին, այդ պատճառով էլ նրանց արտահայտած քերականական իմաստները ավելի ինքնուրույն ու ընկալելի են, քան շաղկապների իմաստները:

Քերականացման ու իմաստային վերացարկման բարձր աստիճանի վրա գտնվում են այն նախադրություններն ու շաղկապները, որոնք բառային մակարդակում որևէ իմաստ չեն արտահայտում, ինչպես **գ, ի, առ, ց, ընդ** նախադիրները, **և, թէ, իսկ** շաղկապները: Մրանց արտահայտած իմաստները միայն քերականական են:

Գրաբարում, սակայն, սպասարկու բառերի կազմում կան զգալի թվով բառեր էլ, որոնք, իմաստային կապերը չկտրելով իրենց նախատիպից, համատեղում են նյութական իմաստ արտահայտող բառերի արժեքներ, ինչպես՝ **առաջի, յետոյ, հանդէպ** և այլն:

Գրաբարի նախադրությունները սպասարկու բառեր են, որոնք սպասարկում են հոլովման համակարգին: Գործողությունների և առարկաների միջև եղած բոլոր հարաբերությունները հնարավոր չէ միայն հոլովների միջոցով արտահայտել՝ չնայած յուրաքանչյուր հոլով բազմաթիվ կիրառություններ ունի: Գրաբարում հոլովական կիրառությունների բացը մասամբ լրացնում են նախադրությունները (նախադիրները): Նրանք արտահայտում են տարածական, ժամանակային, բաղդատական, բացասման և այլ հարաբերություններ, որոնք միայն հոլովները չեն կարող արտահայտել (9) (10):

Նախադրությունները գրաբարում ունեն շատ լայն կիրառություն, որի հիման վրա էլ հայ քերականական ձևավորման սկզբից համարվել են առանձին խոսքի մաս:

Դեռևս Դ. Թրակացու «Քերականական արուեստ»-ի թարգմանության մեջ գրված է. «Նախադրութիւն է բառ նախադրեալ յամենայն մասունս բանի ընդ բարդութեան և բաղդատութեան» (13):

Ա. Այտընյանը նախադրությունը հետևյալ կերպ է բնորոշում. «Նախադրութիւն կըսվի այն անփոփոխ հոլովառու մասն բանին բանին, որ գոյականի կամ դերանվան մը՝ յուր բային հետ ունեցած հարաբերությունը կը ցուցանէ» (3):

Ս. Պալասանյանը նշում է, որ նախադրությունները հոլովների նման «ցույց են տալիս առարկաների միջև եղած հարաբերությունները, երբեմն էլ գործողությունների ուղղությունը» (12):

Ա. Այտընյանը և Մտ. Պալասանյանը ընդունում են նախադրությունների երեք տեսակ՝

ա) բուն նախադրություններ՝ համար, պես, հետ, մոտ, չափ, համեմատ, հակառակ, առանց, դեպի, փոխանակ, մինչև, բացի, իբրև և այլն,

բ) գոյականներից առնված նախադրություններ՝ մեջը, միջին, միջից, միջոցով, միջուկը, վրա, տակ, առաջ, ետև, ձեռքով, միջոցով և այլն,

գ) մակբայներից առնված նախադրություններ՝ առաջ, հետո, ներս, դուրս, հեռու, ծածուկ և այլն:

Նյութական խոսքի մասերի և նախադրությունների հարաբերակցությունը բխում է նախադրությունների խոսքիմասային՝ բնույթից: Նախադրությունները առաջացել են տարբեր խոսքի մասերից՝ գոյականներից, ածականներից, մակբայներից:

Որքան նյութական խոսքի մասերից անցումը նախադրությունների գիտակցումն է, այնքան նախադրության մեջ առկա են ու գիտակցելի նախորդ խոսքի մասի իմաստային տարրերը:

Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերից նախադրությունների անցում են այն բառերը, որոնց մեջ այս կամ այն չափով առկա է հարաբերության իմաստ, որի շնորհիվ նրանք նախադասության մեջ կարող են գործածվել որպես նախադրություններ:

Այսինքն՝ խոսքիմասային փոխանցման ճանապարհին նյութական որևէ խոսքի մաս իր բուն խոսքիմասային իմաստին զուգահեռ ձեռք է բերում ձևաբանական այլ արժեք՝ մի դեպքում կիրառվելով նյութական, մի այլ դեպքում՝ հարաբերության իմաստով: Այս պարագայում բառի մեջ տեղի է ունենում երկու տարբեր իմաստների համատեղում. հիմնական խոսքիմասային իմաստը երկփեղկվում է, և նյութական իմաստի կողքին հանդես է գալիս նախադրության խոսքիմասային իմաստը:

Գրաբարում որոշ նյութական խոսքի մասեր սկսել են հեռանալ իրենց սկզբնական արժեքից և հարաբերվել նախադրություն խոսքի մասի իմաստի հետ: Այդ ճանապարհով առաջացած նախադրությունների մեջ առկա են ծագումնաբանական ընդհանրություններ նյութական խոսքի մասերի հետ, որոնցից առաջացել են դրանք:

Հմտ. *Ի մեջ* – գոյ. Ընկեց *ի մեջք* օրիորդին Ալանաց (Խոր., 179): նի. Տերն փառաց բնակե *ի մեջ* նոցա (Փարպ., 33):

Նման – ած. Որ *նման* էր բնութեան իւրոյ ծնողին (Բուզ., 69): նի. Անվեհեր քաջաբար *նման* թոչնոց յերիվարն հեծան էր (Փարպ., 66):

Ինչպես ցույց են տալիս վկայված բնագրային օրինակները՝ նյութական բովանդակություն ունեցող բառերը (գոյական, ածական, մակբայ) ցուցաբերում են խոսքիմասային տարարժեքություն՝ համատեղելով նախադրության իմաստ:

Մեր քննության առարկան մակբայի և նախադրության իմաստ համատեղող երկարժեք բառերն են, ուստի ստորև կքննենք մակբայ // նախադրություն տարարժեք բառերը գրաբարում:

Գրաբարում մակբայ // նախադրություն տարարժեքություն դրսևորող բառեր են՝

առաջի	հանդէպ	յետոյ
առընթեր	հետեւաբար	յետուստ
արտաքոյ	մեկուսի	ներքոյ
արտաքս	մերձ	ի ներքոյ
գաղտ	ընդմէջ	նմանակի
գետ ի վերոյ	յայնկոյս	շուրջ
դէմ յանդիման	յայսկոյս	շուրջանակի
զկնի	յայտ յանդիման	ստորեաւ
զուգաբար	յանդիման	ի վերոյ
ի վեր	յար	ի վերուստ
ի վերայ	յետ	և այլն:

Այս կարգի բառերը, շարահյուսական կիրառությամբ պայմանավորված, դրսևորում են նյութական խոսքի մասերին բնորոշ հատկանիշներ:

Որպէս նախադրություն գործածվելով՝ պատկանում են չթեքվող խոսքի մասերի թվին և նախադասության անդամ առանձին դառնալ չեն կարող, այլ իրենց խնդրի հետ միասին են լինում նախադասության մեկ անդամ:

Դրանք սովորաբար խնդիր են առնում թեք հոլովածներով, ուստի մակբայ // նախադրություն արժեքներ համատեղող բառերը կքննենք ըստ նախադրության խնդրառության գործոնի:

ա) **Սեռական խնդրով:** Առարկայական նշանակությամբ թուլացած բառերը, դրվելով բայերի վրա, մակբայական իմաստ են արտահայտում, իսկ դրվելով գոյականների վրա, նախադրության իմաստ են արտահայտում: Ըստ այդմ էլ՝ գրաբարի մի շարք բառեր համատեղում են և՛ մակբայի, և՛ նախադրության խոսքիմասային արժեքներ:

Հմնտ. **Ի վերոյ** – մկբ. 1. Վերևում, վերը, սկզբում. ՁՅովսեփ, գոր **ի վերոյն** յիշեցաք (Կոր., 74): 2. Արտաքուստ, դրսի կողմից. Հայք ընկալան զգիրն խաբեբայ թագաւորին, որ **ի վերոյ** ունէր զաւետիս կենաց եւ ի ներքո զդառնութիւն մահու (Եղ., 86): նխ. Վերևը, վրա. Ձկէսն կամար յօրինեաց **ի վերոյ** հաստատութեանն (Մխ. Այր., 6):

Պէմ հանդիման – մկբ. 1. Դեմ առ դեմ, երես առ երես. **Պէմ յանդիման** մեծաւ բռնութեամբ միմեանց յարձակէին (Բուգ., 130): 2. Դեմուդեմ, առջև, հանդիման. Որ **դէմ յանդիման** երեւիս դու, Տէր, եւ ամպ քո կայ ի վերայ դոցա (Թուոց. ԺԴ. 14): 3. Անձամբ. Ապա ի վաղճանի **դէմ յանդիման** երեւեսցի (Բուգ., 72): նիս. Հանդիման, հանդէպ. Որ կա **դէմ յանդիման** լերինն մեծի՝ որում Ցուլն անուանեալ կարդան (Բուգ., 33):

բ) **Տրական խնդրով:**

Առընթեր – մկբ. Միասին. նույն տեղում. **Առընթեր** եւս ունիցիմք գրիւրահասոյց քաջալերիչն (Ագաթ., 247): նիս. Մոտ, կից. **Առընթեր** նմա գիւղն դնեն (Եգն., 25):

Նմանակի – մկբ. // նիս. Նմանապէս, պէս, ըստ. **Նմանակի** սմա եւ այլ սուրբ հարքն զիրեանցն արձանացուցին խոստովանական բան (Յե. Իմ.):

գ) **Հայցական խնդրով:**

Իբրեւ – մկբ. Երբ, մինչ, մինչ դեռ. Իսկ **իբրեւ** մերժեալ լինէր Խոսարով ի թագաւորութենէն՝ խնդրէին Հայք ընդ Շապուհ՝ այլ թագաւոր իւրեանց (Փարպ., 13): նիս. Նման, պէս, որպէս, ինչպէս. Եւ գալարեսցին երկիւնք **իբրեւ** զմագաղաթ, եւ ամենայն աստեղբ թօթափեսցին **իբրեւ** զտերեւ յորթոյն (Եսայի, ԼԴ, 4):

Մերձ – մկբ. Մոտ, մոտիկ. Եհար տիգաւ ի վերայ բարձից նորա եւ **մերձ** տարաւ յընկենուլ զնա (Զենոբ): նիս. Առընթեր, կից, մոտ. Եկեալ յիշելինին **մերձ** ի թագաւորական քաղաքն (Կոր., 54):

դ) **Բացառական խնդրով:**

Գաղտ – մկբ. Աննկատ, ծածուկ, լռելյայն. Որ խօսէր **գաղտ** զընկերէ (Սաղ. Ճ. 5): նիս. Գաղտնի, մեկուսի. Բայց մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ **գաղտ** եկեալ էր ի ճակատն (Բուգ., 215):

Մեկուսի – մկբ. Առանձին, միայնակ, մենակ. Առեալ զձեռանէ նորա՝ զնաց **մեկուսի** (Գործ. ԻԳ. 19): նիս. Մի կողմ, զատ, դուրս, հեռու. Եւ իսկոյն կործանեաց զամպրոպային պատկերն Արամագոյայ, որ կայր **մեկուսի** ի քաղաքէն (Խոր., 233):

ե) **Գործիական հոլով:**

Շուրջ – մկբ. Շուրջանակի, բոլոր կողմերից. Ժողովէր բազմութիւնն **շուրջ** ի քաղաքաց անտի յԵրուսաղէմ (ՆՀԲ): նիս. Առարկայի չորս կողմը, շուրջը. Փուշք ի քում յարութեանն **շուրջ** զքեւ բուսանիցին (Ագաթ., 337):

Շուրջանակի – մկբ. Չորս կողմից, չորս կողմը, շուրջբոլորը. Պատեսցին Ղեւիացիքն **շուրջանակի** զարքայ (Բ. Մնաց. ԻԳ. 7): նիս. Շուրջը, կողքը. Բնակեցարո ւք զղովաւ **շուրջանակի** (Յուդիթ. Է. 9):

Եզրակացություններ

Գրաբարի մակբայ // նախադրություն արժեքներ համատեղող բառերը կապակցության մեջ կարող են կիրառվել նյութական, տվյալ դեպքում

մակբայի խոսքիմասային նշանակությամբ, մի այլ կապակցության մեջ՝ հարաբերության՝ նախադրության իմաստով:

Այս կարգի բառերը որպես նախադրություն գործածվելիս պահանջում են սեռական (ի վերոյ, դէմ յանդիման, ներքո // ի ներքոյ և այլն), տրական (առընթեր, նմանակի), հայցական (իբրև, մերձ), բացառական (գաղտ, հեռի, մեկուսի, լի վեր), գործիական (շուրջ, շուրջանակի) հոլովներով:

Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի փոխանցման ճանապարհով հարստանում է քերականական իմաստ ունեցող խոսքի մասերի համակարգը: Գրաբարի մակբայներից նախադրությունների են անցել այն բառերը, որոնց մեջ այս կամ այն չափով առկա է հարաբերության իմաստ, որի հետևանքով էլ նրանք նախադասության մեջ կարող են գործածվել որպես նախադրություններ:

Քերականական հղումներ

մկբ. – մակբայ

նխ. – նախադրություն

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

(Բնագրային օրինակները վերցրել ենք Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանից» (Երևան, 2003))

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տփլիս, 1909:

Բուզ. - Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:

Եզն. - Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Եղ. - Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Խոր. - Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

Կոր. - Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

Յհ. Կթ. - Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

Մխ. Այր. - Մխիթար Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1876:

ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Հ.

Գաբրիելի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836 – 1837:

Հոդվածում հանդիպող մնացած համառոտագրություններով բնագրային վկայությունները գործածված են հայագիտության մեջ ընդունված կարգով, ինչպէս՝ Ա. Եգր. (Եգր. Գիրք առաջին*), Զենոբ (Զենոբ Գլակ. Պատմութիւն Տարօնայ, Վենետիկ, 1832) Յուդիթ (Յուդիթ*) և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. (1959), Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 262 էջ:
2. Աբրահամյան Ս. (1965), Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 566 էջ:
3. Այտընեան Ա. (1987), Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ և յաւելուածով, Վիեննա, 1866, ԵՊՀ հրատ., Երևան, 866 էջ:
4. Բագրատունի Ա. (1852), Հայերէն քերականութիւն ի պետս զարգացելոց, տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 741 էջ:
5. Իշխանյան Ռ. (1948), Մակբայները ժամանակակից հայերենում, ԵՊՀ «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու», № 4, Երևան, էջ 151-183:
6. Խաչատրյան Լ. (1985), Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, «Լույս» հրատ., Երևան, 138 էջ:
7. Խաչատրյան Լ. (1996), Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 255 էջ:
8. Խաչատրյան Լ. (2021), Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 445 էջ:
9. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ. (2004), Գրաբարի դասագիրք, «Զանգակ – 97» հրատ., Երևան, 383 էջ:
10. Համբարձումյան Վ. (2004), Գրաբարի ձեռնարկ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 175 էջ:

* «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երևան, 1997:

11. Չալրիւեան Վրթ. (1885), Քերականութիւն հայկազեան լեզուի, Մխիթարեան տպ., Վիեննա, 274 էջ:
12. Պալասանեան Ստ. (1870), Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրատուր լեզուի հայոց, Էնֆիաճեան և ընկ. տպ., Թիֆլիս, 120 էջ:
13. Адонц Н. (1915), Дионисий фракийский и армянские толкователи, Императорской академии наук, Петроград, с. 408.

REFERENCES

1. Abrahamyan S. (1959), Jhamanakakic hayereni cht'eqvogh xosqi masery' /Inflexible parts of speech in Modern Armenian/, Yerevan, p. 262.
2. Abrahamyan S. (1965), Cht'eqvogh xosqi masery' & nranc bar'akan ow qerakanakan hatkanishneri p'oxharaberowt'yowny' jhamanakakic hayerenowm /Inflexible parts of speech and the relationship between their lexical and grammatical features in Modern Armenian/, Yerevan, p. 566
3. Aytinian A. (1987), Qnnakan qerakanowt'iwn ashxarhabar kam ardi hayere'n lezowi handerd' nerac'owt'eamb & yawelowac'ov /Examining the grammar of Modern Armenian with introduction and addition/, Vienna, 1866, Yerevan, 866 p.
4. Bagratuni A. (1852), Hayere'n qerakanowt'iwn i pe'ts zargaceloc /Armenian grammar for state development/, Venice, 741 p.
5. Ishkhanyan R. (1948), Makbaynery' jhamanakakic hayerenowm /Adverbs in Modern Armenian/, YSU "Collection of student scientific workings", № 4, Yerevan, p. 151-183.
6. Khachatryan L. (1985), Shifts in the morphological meaning of words, Yerevan, p. 138.
7. Khachatryan L. (1996), Teghasharjher bar'eri d'&abanakan imasti mej /Multiple-meaning words in stable connections of the Modern Armenian/, Yerevan, p. 255.
8. Khachatryan L. (2021), Lezvabanakan termineri owsowmnakan bar'aran /Educational dictionary of linguistic terms/, Yerevan, p. 445.
9. Khachatryan L. (2004), Tosunyan G., Grabari dasagirq /Textbook of the Grabar/, Yerevan, p. 383.
10. Hambardzumyan V. (2004), Grabari d'er'nark /Manual of the Grabar/, Yerevan, p. 175.
11. Chalikhian Vrt. (1885), Qerakanowt'in haykazean lezowi /Grammar of the Haikazian language/, Vienna, p. 274.
12. Palasianian St. (1870), 'ndhanowr tesowt'iwn arewelean nor grawor lezowi hayoc /A general overview of the East Armenian new written language/, Tiflis, p. 120.
13. Adonts N. (1915), Dionisiy frakiyskiy i armyanskiye tolkovateli /Dionysius of Thracia and Armenian interpreters/, Petrograd,, c. 408.

Слова, комбинирующие морфологические значения наречий/ предлогов в древнеармянском языке (грабаре)

Заключение

Ключевые слова и выражения: наречие, предлог, морфологическое значение, частеречный переход, материальное значение, служебное значение, разноценность, синтаксический уровень.

В грабаре присутствуют слова, морфологическое значение которых расщеплено между разными частями речи; данные слова представлены комбинациями в более чем одной частью речи. Эти слова называются частеречными разноценными (многозначными) словами, а грамматический феномен — частеречной разноценностью.

Многозначные слова в диахронической реалии, в синхронном аспекте языка могут в равной степени выступать в сочетаниях более чем одного морфологического значения и соответствующих им синтаксических функций.

В данной статье мы рассмотрели слова в грабаре, сочетающие морфологические значения наречия/предлога, которые благодаря частеречным переходам приобрели разноценность. Морфологические значения таких слов выражены при применении синтаксических конструкций.

Слова, сочетающие в себе значения наречия/ предлога в грабаре могут употребляться в союзе с вещественным/ материальным значением, в данном случае в частеречном значении наречия, в другом сочетании - в значении предлога.

В качестве предлогов данные слова требуют применение родительного (над, напротив, под // внутри и т. д.), дательного (похоже, подобно), винительного (как будто, близко), отложительного (тайно, далеко, изолированно), творительного (вокруг) падежей.

За счет передачи частей речи, имеющих материальное значение, обогащается система частей речи, имеющих грамматическое значение. В грабаре из наречий в предлоги перешли слова, в которых в той или иной мере присутствуют отношения, передаваемые предлогами, вследствие чего в предложениях их можно использовать в качестве предлогов.

Words in Old Armenian language (Grabar), combining adverb/ preposition meanings

Conclusion

Key words and expressions: adverb, preposition, morphological meaning, speech part transition, material meaning, function words (functors), multiple-meaning words, syntactic level.

In Grabar there are words with morphological meaning that is split between different parts of the speech. Combinations of more than one speech category represent those words. Those words are referred to as multiple-meaning words.

Multiple-meaning words in diachronic reality, in the synchronic aspect of the language, can equally combine more than one morphological meaning with the associated syntactic functions.

In this article, we examined those words in Grabar, that combine the adverb/preposition morphology, and acquired multiple meaning in consequence of speech part transitions. Syntactic use of such terms expresses their morphological meanings.

The words that combine the meanings of an adverb/preposition in Grabar can be used in conjunction with a real/material significance, in considered case in the multiple-meaning of an adverb, in another combination - in the meaning of a preposition.

As prepositions, these words require the use of the genitive (above, on the contrary, under // inside, etc.), dative (similar, like), accusative (as if, close), ablative (subtly, far, detached), instrumental (around) cases.

By transmitting parts of speech with material meaning, the system of parts of speech with grammatical meaning is being enriched. In Grabar, the words expressed relations with prepositions, were transmitted from adverbs, and consequently can be used as prepositions in sentences.

Անահիտ Հարությունյան – բանասիրական գիտությունների թեկնածու, IV Արովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ գրաբար, հայոց լեզվի պատմություն, ժամանակակից հայոց լեզու: Հեղինակ է 10 գիտական հոդվածի: anahit1881@inbox.ru

Анаит Арутюнян - кандидат филологических наук, кафедра армянского языка и его преподавания, Армянский Государственный Педагогический Университет им. Х. Абовяна. Круг научных интересов: древнеармянский язык, история армянского языка, современный армянский язык. Автор 10 научных статей. anahit1881@inbox.ru

Anahit Harutyunyan - PhD, lecturer/Chair of the Armenian language and its teaching, ASPU after Kh.Abovyan. Scope of Academic Interests: Old Armenian, History of the Armenian language, Modern Armenian. The author 10 scientific publications. anahit1881@inbox.ru

Խմբագրություն է ուղարկվել 01.12.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 12.12.2023թ.

Հրատարակման է ներկայացվել 10.01.2024թ.